ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀԶՀ-ՇՀԱՇՁԲ-11/3-15/8 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «29» դեկտեմբերի 2015թ.

2015թ-ի դեկտեմբերի 29-ին՝ ժամը 12:00-ին, Հայաստանի զարգացման հիմնադրամի գրասենյակում՝ ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 հասցեում, տեղի ունեցավ ՀԶՀ-ՇՀԱՇՁԲ-11/3-15/8 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Սոնա	Ավետիսյան	Հայաստանի զարգացման հիմնադրամի զբոսաշրջային ծառայություններ մատուցողների աջակցության բաժնի մասնագետ-բաժնի ղեկավարի ժ/պ.
Մարիամ	Մուրադյան	Հայաստանի զարգացման հիմնադրամի Զբոսաշրջության զարգացման և խթանման բաժնի զբոսաշրջային որակի ենթակառուցվածքի զարգացման մասնագետի ժ/պ.

Հանձնաժողովի նիստին ներկա էր՝

Տիրան	Լաճիկյանը	Հայաստանի զարգացման հիմնադրամի գործերի կառավարման բաժնի գլխավոր իրավաբան-բաժնի ղեկավար:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի 2 անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 35-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Սոնա Ավետիսյանը, իսկ քարտուղարն էր՝ Տիրան Լաճիկյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՋՀ-ՇՀԱՇՁԲ-11/3-15/8 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց և վերջիններիս կողմից ներկայացված հայտերի գնահատման մասին:

2. Մասնակիցների կողմից առաջարկված գների, առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին:

1" ՀՋՀ-ՇՀԱՇՁԲ-11/3-15/8 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Սոնա Ավետիսյանը նշեց, որ գնման առարկայի 1-ին չափաբաժնի ընդհանուր (նախահաշվային) գինը կազմում է 10 000 000 ՀՀ դրամ, իսկ 2-րդ չափաբաժնի ընդհանուր (նախահաշվային) գինը կազմում է 2 000 000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի քարտուղար Տիրան Լաճիկյանը հայտնեց, որ՝

- ՀՋՀ-ՇՀԱՇՁԲ-11/3-15/8 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձիք (այսուհետ՝ նաև մասնակիցները).

Հ/հ	Մասնակցի անվանում	Մասնակցի գտնվելու վայրը
1.	«ՅԱՍՈՆ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Վրացական 16
2"	«ՍԱՄԱՐԿ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Ուլնեցու 58
3.	«ԱՆՏԱՐԵՍ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 50ա/1
4.	«ԲԵԿՈՐ-ՀՐԱՏ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց 5
5"	Ա/Ձ «ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ ՖԵՈԴՈՐԻ»	ՀՀ, ք. Երևան, Երվանդ Քոչար 7շ", 62 բն"

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- Մասնակիցները հայտերը պարունակող ծրարները կազմել և ներկայացրել են ՀՋՀ-ՇՀԱՇՁԲ-11/3-15/8 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) հրավերի (այսուհետ՝ հրավեր) պահանջներին համապատասխան.
- Մասնակիցների կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.
- Մասնակիցների կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին:

Որոշվեց՝

1. Սոնա Ավետիսյանի և Տիրան Լաճիկյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

Կողմ՝ 2
Դեմ՝ 0

2. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ, ԱՌԱՋԻՆ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովն արձանագրեց, որ մասնակիցները ներկայացրել են հետևյալ գները՝ առանց ԱԱՀ.

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Աշխատանքի անվանումը	
		Չափաբաժին 1 (Բրոշյուրներ)	Չափաբաժին 2 (Քարտեզներ)
1.	«ՅԱՍՈՆ» ՍՊԸ	7,050,000	1,632,000
2.	«ՍԱՄԱՐԿ» ՍՊԸ	1,416,667	6,666,667
3.	«ԱՆՏԱՐԵՍ» ՍՊԸ	6,657,500	824,000
4.	«ԲԵԿՈՐ-ՀՐԱՏ» ՍՊԸ	9,500,000	2,200,000
5.	Ա/Ձ «ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ ՖԵՈԴՈՐԻ»	-	1,800,000

Որոշվեց՝

Ընթացակարգի մասնակիցների զբաղեցրած տեղերը"

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Աշխատանքի անվանումը	
		Չափաբաժին 1 (Բրոշյուրներ)	Չափաբաժին 2 (Քարտեզներ)
1.	«ՅԱՍՈՆ» ՍՊԸ	2-րդ	2-րդ
2.	«ԱՆՏԱՐԵՍ» ՍՊԸ	1-ին	1-ին
3.	«ԲԵԿՈՐ-ՀՐԱՏ» ՍՊԸ	4-րդ	4-րդ
4.	Ա/Ձ «ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ ՖԵՈԴՈՐԻ»	-	3-րդ

Կողմ՝ 2
Դեմ՝ 0

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին

Որոշվեց՝

Հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 49-րդ կետով սահմանված փաստաթղթերը հանձնաժողովի քարտուղարի կողմից հանձնաժողովի անդամներին տրամադրվելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 11:00-ին:

Կողմ՝ 2
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Հանձնաժողովի անդամ՝

Ս. Ավետիսյան

Մ" Մուրադյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Տ. Լաճիկյան